



«ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար



« ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա » ՓԲԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

- 3 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
 - 4 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 - 5 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 - 6 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 - 7 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
 - 8 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
-

Ընկերության գտնվելու վայրը՝

Հայաստանի Հանրապետություն

Իրավական ձևը՝

Փակ բաժնետիրական ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում

Տնօրեն՝

Վահագն Սահակյան

«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

		2016	2015
	Ծան.	հազար դրամ	հազար դրամ
Հասույթ		313,162	325,407
Վաճառքի ինքնարժեք	5	(166,155)	(171,061)
Համախառն շահույթ		147,007	154,346
Գործառնական այլ եկամուտներ		459	9,372
Վարչական ծախսեր	5	(104,802)	(94,344)
Իրացման ծախսեր	5	-	(1,688)
Այլ ծախսեր	5	(133)	(2,565)
Գործառնական շահույթ (վնաս)		42,531	65,122
Ֆինանսական եկամուտ	6	3,527	487
Շահույթ հարկումից առաջ		46,058	65,609
Շահութահարկի գծով ծախս	7	(5,512)	(13,624)
Զուտ շահույթ		40,546	51,985
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ եկամուտ		40,546	51,985

Վահագն Մահակյան
 Տնօրեն



Էլմառ Դավաթյան
 Չլիքավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ՝ 24.03.2017

«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

		31 դեկտեմբեր 2016	31 դեկտեմբեր 2015
	Ծան.	հազար դրամ	հազար դրամ
ԱԿՏԻՎ			
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	30,502	47,793
Կանխավճար շահութահարկի գծով		5,838	1,160
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		104,433	87,547
		140,773	136,500
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	684	2,656
Հետաձգված հարկային ակտիվներ	10	-	1,208
		684	3,864
		141,457	140,364
ԱԿՏԻՎ			
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	39,005	17,553
Պահուստ		-	20,000
		39,005	37,553
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություն	10	683	-
		683	-
		39,688	37,553
Ընդամենը պարտավորություններ			
		101,769	102,811
Ջուտ ակտիվներ			
Մեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		3,570	3,570
Կուտակված շահույթ		98,199	99,241
		101,769	102,811

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2016 հազար դրամ	2015 հազար դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	401,274	377,535
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(84,631)	(71,765)
Աշխատավարձ, եկամտահարկ և սոցվճար	(196,065)	(185,897)
Վճարված շահութահարկ (վճարումներ բյուջե)	(8,293)	(27,671)
Այլ հարկերի և տուրքերի վճարումներ	(56,548)	(42,702)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(133)	(2,269)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	55,604	47,231
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(804)	-
Տոկոսների ստացումից	3,527	487
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	2,723	487
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	(41,588)	(64,867)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(41,588)	(64,867)
Դրամական միջոցների վերագնահատումից զուտ օգուտ/(վնաս)	147	(1,607)
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	16,886	(18,756)
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ	87,547	106,303
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ	104,433	87,547

«Բի-Ղի-Օ Արմենիա» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Բաժնետիրական կապիտալ հազար դրամ	Չբաշխված շահույթ հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2015թ	3,570	99,241	102,811
Տարվա համապարփակ եկամուտ			
Շահույթ		40,546	40,546
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	-	40,546	40,546
Բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից			
Շահաբաժիններ		(41,588)	(41,588)
Ընդամենը՝ բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից	-	(41,588)	(41,588)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2016թ.	3,570	98,199	101,769
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2014թ	3,570	112,123	115,693
Տարվա համապարփակ եկամուտ			
Շահույթ		51,985	51,985
Ընդամենը համապարփակ եկամուտ	-	51,985	51,985
Բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից			
Շահաբաժիններ		(64,867)	(64,867)
Ընդամենը՝ բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից	-	(64,867)	(64,867)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2015թ	3,570	99,241	102,811

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն.....	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	6
1. Ընկերության վերաբերյալ.....	8
2. Պատրաստման հիմունքներ.....	8
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ.....	12
4. Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում	12
5. Ծախսերն ըստ բնույթի.....	16
6. Ֆինանսական եկամուտներ.....	17
7. Շահութահարկի գծով ծախս	17
8. Առևտրային և այլ դերիտորական պարտքեր	18
9. Հիմնական միջոցներ.....	18
10. Հետաձգված հարկ.....	19
11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21
12. Կանոնադրական կապիտալ և ընդամենը սեփական կապիտալ.....	21
13. Կապակցված կողմերի բացահայտումներ	21
14. Պայմանական պարտավորություններ.....	22
15. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ	22
16. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	22

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

1. Ընկերության վերաբերյալ

«Բի-Դի-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 21.01.2010թ.-ին, գրանցման համար՝ 273.120.05398, վկայական՝ 03 Ա 086921: Ընկերությանը միացել է «Ամերիա Աուդիտ» ՓԲԸ, և միացումը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 19.11.2012թ.-ին:

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

Ընկերությունը գործում է ՀՀ Ֆինանսների Նախարարության կողմից տրամադրված աուդիտի No ԱՕ N 082 լիցենզիայի հիման վրա, մատուցում է աուդիտորական և աուդիտին հարակից ծառայություններ, հաշվապահական և խորհրդատվական ծառայություններ:

Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 10, տարածք 114:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 18-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՄ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՄ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա. 2016թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

2016թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո ընկած ժամանակահատվածում առաջին անգամ ուժի մեջ մտած այնպիսի նոր ստանդարտներ կամ մեկնաբանություններ չկան, որոնք ունեն էական ազդեցություն Շնկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 14 Կարգավորվող հետաձգված հաշիվներ ստանդարտը միակ նոր ստանդարտն է, որը ուժի մեջ է մտնում 2016թ. հունվարի 1-ից:

Այդ ամսաթվից ուժի մեջ մտած ոչ մի փոփոխություն, որ կատարվել է ստանդարտներում, էական ազդեցություն չի ունեցել Շնկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

«Բի-Ղի-Օ Արմենիա» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

բ) Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Հետևյալ նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել և վաղաժամկետ չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվություններում, կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Հնկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվառման քաղաքականության փոփոխությունների էությունը	հաշվապահական մեջ ակնկալվող	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՍ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Հնկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
1	ՖՀՄՍ 9 ֆինանսական գործիքներ (2014)	ՖՀՄՍ 9 <i>Ֆինանսական գործիքներ</i> (2014թ.) ստանդարտը ներառում է ֆինանսական գործիքների ծրագրերի բոլոր երեք փուլերի (դասակարգում ու չափում, արժեզրկում և հեջի հաշվառում) մասին վերջնական պահանջները:		2018թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2018թ. հունվար	Ազդեցությունը դեռևս պետք է ճշգրտվի
2	ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթ	ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է մեկ միասնական մոդել՝ հաշվառելու հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթը: Ստանդարտում նշված սկզբունքով ընկերությունը պետք է ճանաչի հասույթը պատկերելու պայմանագրով նախատեսված ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդներին այն արժեքով, որն արտացոլում է նշված ապրանքների կամ ծառայությունների դիմաց անկնկալվող հատուցումը:		2018թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2018թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում
3	ՖՀՄՍ 16, Վարձակալություն (2016)	ՖՀՄՍ 16 ստանդարտի համաձայն վարձակալը ճանաչում է վաճակալվող գույք հանդիսացող ակտիվները և վարձակալության գծով		2019թ. հունվար Ավելի վաղ	2019թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում

«Բի-Ղի-Օ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

#	Հրապարակում	Հրապարակման արդյունքում հաշվառման քաղաքականության փոփոխությունների էությունը	հաշվապահական մեջ ակնկալվող	Ամսաթիվը, որից սկսած ՖՀՄՄ-ի կիրառումը պահանջվում է	Ամսաթիվը, որից սկսած Ընկերությունը նախատեսում է առաջին անգամ կիրառել հրապարակումը	Առաջին անգամ կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա
		<p>պարտավորություն: Վաճակալվող գույք հանդիսացող ակտիվները դիտարկվում և մաշվում են այլ ոչ ֆինանսական ակտիվների նման, իսկ պարտավորության գծով հաշվարկվում է տոկոսագումար: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբում չափվում է զեղչված վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք ապագա վարձավճարների ներկա արժեքով:</p>	կիրառումը թույլատրելի է			
4	ՖՀՄՄԿ 22 Արտարժույթով գործարքներ կանխավճարային եղանակով	<p>Մեկնաբանումը վերաբերում է արտարժույթով գործարքներին ամբողջությամբ կամ մասնակիորեն, որտեղ առկա է հատուցում, որն արտահայտված է կամ գնանշված է արտարժույթով: Ընկերությունը ճանաչում է կանխավճար (ակտիվ) կամ հետաձգված եկամուտ (պարտավորություն) նշված հատուցման գծով մինչև համապատասխան ակտիվի, ծախսի կամ եկամտի ճանաչումը: Ընդ որում կանխավճարը կամ հետաձգված եկամուտը համարվում են ոչ ֆինանսական:</p>	2018թ. հունվար Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է	2018թ. հունվար	Ազդեցություն չի նախատեսվում	

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գործառնական դեբիտորական պարտքեր – առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիության գծով (տե՛ս Ծանոթագրություն 4 -Պարտքային ռիսկ):

Մաշվածություն և հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ – օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տե՛ս Ծանոթագրություն 18):

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքն Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չձգրտված)*
- *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերի՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույթային ռիսկ,
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Կրեդիտորական պարտքեր

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

<i>Ֆինանսական ակտիվներ</i>	Փոխառություններ և դեբիտորական պարտքեր	
	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	24,078	41,042
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	104,433	87,547
	128,511	128,589

<i>Ֆինանսական պարտավորություններ</i>	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Կրեդիտորական պարտքեր	4,362	3,817
	4,362	3,817

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, դեբիտորական պարտքեր, կրեդիտորական պարտքեր: Դրամական միջոցների և դրանց համարժեքների, դեբիտորական պարտքերի, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապառիկ վաճառքներից:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և ներդրած ավանդներից: Ընկերությունը ընդունելի է համարում միայն խոշորագույն բանկերը:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերության դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն առաջանում է փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ փոխառություններից: Ընկերությունը չունի փոխառություններ ուստի առկա չէ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ:

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն վերջիններիս ֆունկցիոնալ արժույթով:

Այլ արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ Կենտրոնական բանկի կայքում՝ www.cba.am, հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև.

	USD	EUR
	<u>հավասար է ՀՀ դրամ</u>	<u>հավասար է ՀՀ դրամ</u>
ՀՀ ԿԲ դրույք 31.12.16	483.94	512.20
ՀՀ ԿԲ դրույք 31.12.15	483.75	528.69

Առ 31-ը դեկտեմբերի, Ընկերության գուտ ենթարկվածությունը արտարժույթային ռիսկերին ներկայացված է ստորև.

	31.12.2016	31.12.2015
Արտարժույթով արտահայտված գուտ ֆինանսական ակտիվներ/(պարտավորություններ)	հազար դրամ	հազար դրամ
Եվրո	1,902	-
ԱՄՆ դոլար	60,493	32,252
Ընդամենը գուտ ակտիվներ	<u>62,395</u>	<u>32,252</u>

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված գուտ ակտիվների վրա (այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով) կհանգեցնի տարվա հարկումից առաջ շահույթի և գուտ ակտիվների աճին՝ 6 մլն. դրամի չափով (2015թ.՝ 3.2 մլն. դրամ), իսկ 10% արժեզրկման դեպքում՝ տարվա հարկումից առաջ վնասի և գուտ ակտիվների նվազմանը՝ 6 մլն. դրամի չափով (2015թ.՝ 3.2 մլն. ՀՀ դրամ):

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված ռժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 տարի հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Կրեդիտորական պարտքեր	4,362	-	-	-	-
	4,362	-	-	-	-

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 տարի հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Կրեդիտորական պարտքեր	3,817	-	-	-	-
	3,817	-	-	-	-

Կապիտալին վերաբերող բացահայտումներ

Ընկերության կապիտալը ներառում է սեփական կապիտալի բոլոր տարրերը:

Ընկերությունը չունի հաստատված քաղաքականություն կապիտալի կառավարման վերաբերյալ, բայց կառավարում է իր կապիտալն այնպես, որ

- Ընկերությունը կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում (գործունեության անընդհատությունը)՝ բաժնետերերի և այլ շահառուների համար ապահովելով եկամուտներ և հատուցումներ,
- Ընկերությունը կարողանա բաժնետերերի համար ապահովել պատշաճ եկամուտ՝ ապրանքների և ծառայությունների գները սահմանելով ռիսկի մակարդակին համապատասխան:

«Բի-Ղի-Օ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

5. Ծախսերն ըստ բնույթի

2016թ.	Ընդամենը հազար դրամ	Ծառայության ինքնարժեք հազար դրամ	Վարչական ծախսեր հազար դրամ	Իրացման ծախսեր հազար դրամ	Այլ ծախսեր հազար դրամ
Աշխատակիցների գծով ծախս	221,784	164,209	57,575		
Գրասենյակի ծախսեր	27,566		27,566		
Մաշվածություն և ամորտիզացիա	2,642		2,642		
Ծրագրային ապահովման ծախսեր	1,450	1,450			
Այլ	17,648	496	17,019		133
	271,090	166,155	104,802		133

2015թ.	Ընդամենը հազար դրամ	Ծառայության ինքնարժեք հազար դրամ	Վարչական ծախսեր հազար դրամ	Իրացման ծախսեր հազար դրամ	Այլ ծախսեր հազար դրամ
Աշխատակիցների գծով ծախս	211,706	168,608	43,098		
Գրասենյակի ծախսեր	29,030		29,030		
Մաշվածություն և ամորտիզացիա	2,122		2,122		
Ծրագրային ապահովման ծախսեր	298	298			
Այլ	26,502	2,155	20,094	1,688	2,565
	269,658	171,061	94,344	1,688	2,565

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

6. Ֆինանսական եկամուտներ

	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Տոկոսային եկամուտ ներդրված ավանդից	3,527	487
	3,527	487

7. Շահութահարկի գծով ծախս

	2016 հազար դրամ	2015 հազար դրամ
Ընթացիկ հարկային ծախսեր	3,621	12,613
Հետաձգված հարկային ծախս	1,891	1,011
	5,512	13,624

Տարվա փաստացի հարկային գումարների և Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի սահմանված դրույքի միջև տարբերության պատճառները ներկայացված են ստորև.

	2016թ.		2015թ.	
	հազար դրամ	Հարկի արդյունավետ դրույք (%)	հազար դրամ	Հարկի արդյունավետ դրույք (%)
Շահույթ/(վնաս) նախքան հարկումը (համաձայն ՖՀՄՄ)	46,058		65,609	
20% հարկային դրույքաչափով հաշվարկված հարկ	9,212	20.00%	13,122	20.00%
Հարկման նպատակներով չնվազեցվող/չհարկվող ծախսեր և եկամուտ	-3,700	-8.03%	502	0.77%
Շահութահարկի գծով ծախս	5,512	11.97%	13,624	20.77%

Գնահատումներ և ենթադրություններ

Ընկերությունը ենթակա է շահութահարկով հարկման Հայաստանի Հանրապետությունում: Ձեռնարկատիրական բնականոն գործունեության պայմաններում որոշ գործարքների և հաշվարկների գծով առկա է որոշակի անորոշություն: Արդյունքում, Ընկերությունը ճանաչում է հարկային պարտավորությունները՝ ելնելով այն գնահատումներից, թե արդյոք կառաջանան լրացուցիչ հարկեր և տուկոսներ: Սույն հարկային պարտավորությունները ճանաչվում են, երբ, չնայած Ընկերության այն համոզմունքի, որ հարկային հաշվարկը հիմնավոր է, ընկերությունը գտնում է, որ որոշ դրույքներ հարկային մարմինների կողմից հավանական է, որ լիովին հիմնավորված չհամարվեն: Ելնելով մի շարք գործոնների գնահատումից, այդ թվում՝ նախկին փորձից և հարկային օրենսդրության մեկնաբանություններից, Ընկերությունը գտնում է, որ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

հաշվեգրված հարկային պարտավորություններն իսկամիտ են՝ ստուգման համար, բաց բոլոր տարիների համար: Սույն գնահատումը հիմնված է ենթադրությունների վրա, որոնք կարող են ներառել ապագայի վերաբերյալ մի շարք բարդ դատողություններ: Տարբերությունները կարող են ազդել հարկային ծախսերի վրա, այն չափով, որքանով վերջնական հարկային ակտիվը կամ պարտավորությունը կտարբերվի հաշվարկված գումարից:

8. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	22,004	41,042
Դեբիտորական պարտքեր կապակցված կողմերի գծով	2,074	0
Ընդամենը որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր դասակարգված ֆինանսական ակտիվներ բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների	24,078	41,042
Կանխավճարներ	6,387	5,853
Պետական բյուջեից ստացվելիք գումարներ	37	595
Այլ դեբիտորական պարտքեր	0	303
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	30,502	47,793

Որպես փոխառություն և դեբիտորական պարտք դասակարգված առևտրային և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից: Կապակցված կողմերի հետ դեբիտորական պարտքերը բացահայտված են Ծանոթագրություն 15-ում:

9. Հիմնական միջոցներ

	Համակարգչային տեխնիկա հազար դրամ	Տրանսպորտ. միջոցներ հազար դրամ	Գրասենյակա- յին գույք հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
<i>Սկզբնական արժեք</i>				
1 հունվարի 2015թ.	14,122	8,936	2,822	25,880
31 դեկտեմբերի 2015թ.	14,122	8,936	2,822	25,880
1 հունվարի 2016թ.	14,122	8,936	2,822	25,880
Ավելացումներ	670			670
Դուրս գրված	(1,472)		(14)	(1,486)
31 դեկտեմբերի 2016թ.	13,320	8,936	2,808	25,064
<i>Կուտակված մաշված.</i>				
1 հունվարի 2015թ.	13,589	4,743	2,770	21,102
Մաշվածություն	295	1,797	30	2,122
31 դեկտեմբերի 2015թ.	13,884	6,540	2,800	23,224

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

1 հունվարի 2016թ.	13,884	6,540	2,800	23,224
Մաշվածություն	822	1,797	23	2,642
Դուրս գրված	(1,472)		(14)	(1,486)
31 դեկտեմբերի 2016թ.	13,234	8,337	2,809	24,380
Ջուտ հաշվեկշռային արժեք				
1 հունվարի 2015թ.	533	4,193	52	4,778
31 դեկտեմբերի 2015թ.	238	2,396	22	2,656
31 դեկտեմբերի 2016թ.	86	599	-	684

Ամբողջությամբ մաշված հիմնական միջոցները ներկայացվում են ստորև.

	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Համակարգչային տեխնիկա	12,650	12,648
Գրասենյակային գույք	2,808	2,672
	15,458	15,320

10. Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ժամանակավոր տարբերությունների մասով հաշվարկվում է ամբողջությամբ ըստ պարտավորությունների մեթոդի՝ 20% հարկադրույքի կիրառմամբ (2015թ. դրությամբ՝ 20%):

Հետաձգված հարկային պարտավորությունների շարժը ներկայացված է ստորև.

	2016 հազար դրամ	2015 հազար դրամ
Տարեսկզբի մնացորդ	1,208	2,219
(Օախս)/ եկամուտ շահույթի կամ վնասի միջոցով	(1,891)	(1,011)
Տարեվերջի մնացորդ	(683)	1,208

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվել են բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով, այն դեպքերում, երբ, ըստ դեկլարացիայի գնահատման, հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը: Ներկայացված հաշվետու ժամանակաշրջաններում ընկերությունը չի ունեցել հարկային վնասներ, որոնք թույլ կտային ձևավորելու հետաձգված հարկային ակտիվներ:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Մտորն ներկայացված են հետաձգված հարկային պարտավորությունները, շահույթում կամ վնասում ճանաչված գումարները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարները.

	Ակտիվներ 2016թ. հազար դրամ	Պարտավո րություննե ր 2016թ. հազար դրամ	Զուտ 2016թ. հազար դրամ	(Հաշվեզրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին 2016թ. հազար դրամ
Դեբիտորական պարտքեր		(1,307)	(1,307)	4,627
Հիմնական միջոցների մաշվածություն		(9)	(9)	(9)
Անավարտ արտադրություն	633		633	(2,509)
Կուտակված պարգևավճարների գծով պահուստ				(4,000)
Հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	633	(1,316)	(683)	(1,891)
Հարկի հաշվանցում	(633)	633	-	-
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	-	(683)	(683)	(1,891)

	Ակտիվ 2015թ. հազար դրամ	Պարտավո րություն 2015 հազար դրամ	Զուտ 2015 հազար դրամ	(Հաշվեզրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին 2015 հազար դրամ
Դեբիտորական պարտքեր		(5,934)	(5,934)	(5,934)
Անավարտ արտադրություն	3,142		3,142	3,142
Կրեդիտորական պարտքեր կուտակված պարգևավճարների գծով	4,000		4,000	1,781
Հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	7,142	(5,934)	1,208	(1,011)
Հարկի հաշվանցում	(7,142)	7,142	-	-
Զուտ հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	-	1,208	1,208	(1,011)

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,259	3,791
Այլ կրեդիտորական պարտքեր	103	26
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի և փոխառությունների	4,362	3,817
Ստացված կանխավճարներ	17,078	7,114
Կրեդիտորական պարտքեր՝ հարկեր և սոցիալական վճարներ	17,565	6,622
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	39,005	17,553

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

12. Կանոնադրական կապիտալ և ընդամենը սեփական կապիտալ

	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Կանոնադրական կապիտալ	3,570	3,570

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 3,570,000 (երեք միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար) դրամ, որը բաղկացած է 3,570 (երեք հազար հինգ հարյուր յոթանասուն) հատ բաժնետոմսից, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1'000 (մեկ հազար) ՀՀ դրամ: Բոլոր 3,570 հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են:

13. Կապակցված կողմերի բացահայտումներ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում կապակցված կողմերի հետ՝ անկախ կողմերի միջև գործարքների պայմաններին համարժեք պայմաններով:

(i) Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ Ընկերության տնօրենը, գլխավոր հաշվապահը, տնօրենի տեղակալը: Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսումները ներկայացվում են ստորև:

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Աշխատավարձ, այլ հատուցումներ	27,855	20,966

(ii) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Կողմերի հետ փոխկապակցվածությունը	Գործարքի տեսակը	Գործարքի գումարը		Պարտքի մնացորդ	
		2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ	2016թ. հազար դրամ	2015թ. հազար դրամ
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ	Ծառայություն- ների գնում	38,870	14,725	173	-
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ	Ծառայություն- ների վաճառք	3,155	3,188	2,074	-

14. Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

15. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ

2016թ. ընթացքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխություններ չեն եղել:

16. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հասույթ

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ գնորդին են փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատուցումների նշանակալի մասը, և հավանական է, որ գործարքի հետ ասոցիացված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն: Այդ չափանիշները համարվում են բավարարված, երբ ապրանքները մատակարարվում են գնորդին: Ապրանքը ետ վերադարձնելու իրավունքի առկայության դեպքում Ընկերությունը հետաձգում է հասույթի ճանաչումը մինչև վերոնշյալ իրավունքի ուժը կորցնելը:

Երբ ծառայությունների մատուցումից հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել և հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտներ կհոսեն դեպի Ընկերություն, գործարքի հասույթը պետք է ճանաչել այն ժամանակաշրջանում, երբ մատուցվում են ծառայությունները:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Արտարժույթային գործարքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում՝ բացառությամբ արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրումների հեջ որակվող արտարժույթով արտահայտված փոխառությունների, որոնց դեպքում տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և փոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունների հետ միասին կուտակվում են արտարժույթի փոխանակման պահուստում:

Ֆինանսական ակտիվներ

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Դրանք հիմնականում առաջանում են ապրանքների իրացման և ծառայությունների մատուցման արդյունքում (օրինակ՝ առևտրային դեբիտորական պարտքեր), բայց ներառում են նաև այլ պայմանագրային դրամային ակտիվներ: Այդպիսի ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ձեռքբերմանը կամ թողարկմանը, իսկ հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը:

Արժեզրկման պահուստը ճանաչվում է, երբ առկա է անկողմնակալ վկայություն (օրինակ՝ գործընկերներն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, չեն կատարում ստանձնած պարտավորությունները կամ ուշացնում են վճարումները) առ այն, որ դեբիտորական պարտքը սահմանված ժամկետներում հնարավոր չի լինի ամբողջությամբ հավաքագրել: Նման պահուստի գումարը դեբիտորական պարտքի գուտ հաշվեկշռային արժեքի և արժեզրկված պարտքերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է: Առևտրային գուտ դեբիտորական պարտքերի համար նման պահուստները հաշվառվում են առանձին հաշվով, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ որպես վարչական ծախս: Եթե հաստատվում է, որ առևտրային դեբիտորական պարտքն անհավաքագրելի է, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում դրա հետ կապված պահուստի դիմաց:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Ընկերության փոխառությունները և դեբիտորական պարտքերը ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ դրամարկղում, ցպահանջ ավանդներ բանկում, երեք ամիս կամ երեք ամսից պակաս մարման ժամկետով այլ բարձր իրացվելիություն ունեցող կարճաժամկետ ներդրումներ:

Ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են հետևյալը՝

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

- Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը:

Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները կապիտալացվում են՝ հանած ստացված տոկոսները այն դրամական միջոցների գծով, որոնք դեռևս չեն ծախսվել, երբ դրանք ուղղակիորեն կապված են նախատեսված օգտագործմանը կամ վաճառքին պատրաստ լինելու համար զգալի ժամանակ պահանջող ակտիվի ձեռքբերման, ներդրման կամ ստեղծման հետ:

Վարձակալած ակտիվներ

Ակտիվը համարվում է ուղղակիորեն ձեռքբերված, երբ Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները (ֆինանսական վարձակալություն): Սկզբնապես ակտիվը ճանաչվում է վարձակալված գույքի իրական արժեքից և վարձակալության ընթացքում նվազագույն վարձավճարների ներկա արժեքից նվազագույնի չափով: Համապատասխան վարձակալության գումարները ճանաչվում են որպես պարտավորություն: Վարձավճարները բաղկացած են հիմնական գումարից և տոկոսից: Տոկոսի բաղադրիչը արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում վարձակալության ողջ ժամանակահատվածի ընթացքում և իրենից ներկայացնում է վարձակալության պարտավորության հաստատուն մասնաբաժինը: Հիմնական գումարի բաղադրիչը նվազեցնում է վարձատուի նկատմամբ պարտավորության մնացորդը:

Երբ Ընկերությանը չեն փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները (գործառնական վարձակալություն), վարձակալության շրջանակներում վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում գծային հիմունքով: Խրախուսող պայմաններից կուտակված օգուտը ճանաչվում է որպես վարձակալական ծախսի նվազեցում գծային հիմունքով վարձակալության ամբողջ ժամկետի ընթացքում:

Ներդրումային գույք

Ընկերության ներդրումային գույքն ամեն տարի վերագնահատվում է շուկայական արժեքով: Հաշվեկշռային արժեքի տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Վարձակալությունից վարձակալական դեբիտորական պարտքը ճանաչվում է գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում: Խրախուսող պայմանների առկայության դեպքում (օրինակ՝ առանց վարձավճարի ժամանակաշրջան), վերոնշյալ մեթոդի կիրառմամբ

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

պայմանավորված՝ ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը չի ներառում որպես առանձին ակտիվ ճանաչված գումարները:

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվներ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով և հետագայում ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ընկերության կողմից ճանաչված ոչ նյութական ակտիվները, դրանց օգտակար ծառայությունը և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների արժեքի որոշման մեթոդները ներկայացված են ստորև.

Ոչ նյութական ակտիվ	Օգտակար ծառայության ժամկետ	Գնահատման մեթոդ
Լիցենզիաներ և ապրանքանիշեր	10 տարի	Գնահատված եկամուտներ և շահույթ
Պայմանագրային փոխհարաբերություններ	Պայմանագրային ժամկետ (մինչև 5 տարի)	Գնահատված գեղչված դրամական միջոցների հոսքեր

Ներստեղծված ոչ նյութական ակտիվներ (Մշակման ծախսումներ)

Ներքին մշակման ծախսումները կապիտալացվում են այն դեպքում, երբ Ընկերությունը կարող է ցույց տալ.

- Ակտիվն ավարտին հասցնելու և վաճառելու համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական կարողությունը,
- Մշակումն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ միջոցների առկայությունը,
- Մշակումն ավարտին հասցնելու և վաճառելու մտադրությունը,
- Ակտիվը վաճառելու կարողությունը,
- Ո ը ակտիվի վաճառքն առաջացնելու է ապագա տնտեսական օգուտներ,
- Ո ը ակտիվի մշակման ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Կապիտալացված մշակման ծախսերն ամորտիզացվում են այն ժամանակահատվածում, որի ընթացքում Ընկերությունը ակնկալում է օգուտներ ստանալ մշակված ակտիվի վաճառքից: Ամորտիզացիայի ծախսերը ներառվում են Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության *վաճառքի ինքնարժեք* տողում:

Վերոնշյալ պահանջները չբավարարող մշակման և ներքին նախագծերի հետազոտության փուլի ծախսումները ճանաչվում են Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, այն ժամանակաշրջանում, որում դրանք տեղի են ունենում:

Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են, երբ դրանք դառնում են իրավականորեն վճարման ենթակա՝ երբ դրանք հաստատվում են բաժնետերերի կողմից:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- Գուղվիլի սկզբնական ճանաչումից:
- Ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ո՛չ հարկվող շահույթի, և ո՛չ էլ հաշվապահական շահույթի վրա:
- Դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական է, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Իրական արժեքով չափվող ներդրումային գույքից առաջացող հետաձգված հարկային ակտիվների վերաբերյալ այն կանխավարկածը, որ փոխհատուցումը տեղի է ունենալու վաճառքի, այլ ոչ թե շահագործման շնորհիվ, համարվում է անհերքելի:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցի ապատեղակայման և քանդման ապագա անխուսափելի ծախսումների ներկա արժեքը: Համապատասխան պարտավորությունը ճանաչվում է պահուստներում:

Չողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման: Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով: Մաշվածության հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ տոկոսադրույքները.

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Շենքեր	- 2% տարեկան գծային մեթոդով
Սարքավորումներ և մեքենաներ	- 20% տարեկան գծային մեթոդով
Հարմարանքներ և կցամասեր	- 20% տարեկան գծային մեթոդով
Համակարգչային տեխնիկա	- 20% տարեկան գծային մեթոդով
Տրանսպորտային միջոցներ	- 10% տարեկան գծային մեթոդով

Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս վայր և առկա վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Սովորաբար փոխարինելի համարվող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի ՖԻՖՕ բանաձևը:

Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- Դրանք մատչելի են շտապ վաճառքի համար
- Ղեկավարությունը պարտավորված է վաճառքի պլանով
- Վաճառքի պլանում կարևոր փոփոխությունների տեղի ունենալը կամ պլանի չեղյալ համարվելը քիչ հավանական են
- Սկսվել է ակտիվ գործընթաց գնորդ գտնելու ուղղությամբ
- Ակտիվը կամ օտարման խումբը վաճառվում է խելամիտ գնով իրական արժեքի հետ համեմատած, և
- Ակնկալվում է վաճառքը իրականացնել դասակարգումից հետո 12 ամսվա ընթացքում:

Որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվները և օտարման խմբերը չափվում են հետևյալներից նվազագույնով՝

- Հաշվեկշռային արժեք (որպես վաճառքի համար պահվող դասակարգումից անմիջապես առաջ ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն որոշված)
- Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ

Քանի որ ոչ ընթացիկ ակտիվները (այդ թվում՝ օտարման խմբում ներառված ակտիվները) դասակարգված են որպես վաճառքի համար պահվող, ուստի նրանց համար մաշվածություն չի հաշվարկվում:

Տարվա ընթացքում օտարված գործունեության արդյունքները ներառվում են Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում մինչև օտարման ամսաթիվը:

Ընդհատված գործունեությունը Ընկերության գործունեության բաղադրիչ մասն է, որը կամ օտարվել է, կամ դասակարգված է որպես վաճառքի համար պահվող, և կազմում է բիզնեսի առանձին խոշոր ուղղության կամ գործառնությունների իրականացման աշխարհագրական տարածքի օտարման մեկ համակարգված պլանի մաս կամ բացառապես վերավաճառելու նպատակով ձեռք բերված դուստր կազմակերպություն է:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2016թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

Ընդհատված գործունեությունները ներկայացվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվության մեջ առանձին տողով՝ ներառելով ընդհատված գործունեության շահույթը կամ վնասը հարկումից հետո, ինչպես նաև ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների օտարումից կամ օտարման խմբերից կամ իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներով չափումից ճանաչված օգուտը կամ կորուստը հարկումից հետո:

Պետական շնորհներ

Կապիտալ ծախսումների համար ստացված պետական շնորհը սովորաբար նվազեցվում է ձեռքբերված ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս: Ընթացիկ ծախսերի համար տրամադրվող շնորհը գտնվում է Ընկերության կողմից կրած ծախսերի դիմաց: Այն դեպքում, եթե պետական շնորհի տրամադրումը կախված է Ընկերության կողմից որոշակի չափանիշներ բավարարելուց, շնորհը սկզբնապես ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ: Երբ այդ չափանիշները բավարարված են, հետաձգված եկամտի մնացորդը ներկայացվում է Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում կամ նվազեցվում է գնված ակտիվի դիմաց:

Պահուստներ

Ընկերությունը ճանաչել է պահուստներ անորոշ ժամկետի կամ գումարի պարտավորությունների համար, այդ թվում՝ անբարենպաստ պայմաններով վարձակալության, երաշխիքային պարտավորությունների, վարձակալած օբյեկտի վերականգնման և իրավական վեճերի մասով: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականի հաշվետու ամսաթվի դրությամբ գեղչված արժեքը: Չեղչման դրույքը պետք է լինի այն դրույքն՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Վարձակալած գույքի վերականգնման պահուստի դեպքում հաշվի է առնվում այն հավանականությունը, որ տվյալ գույքը կարող էր վարձակալության տրվել վարձակալության ողջ կամ որոշ ժամկետի ընթացքում: